



ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ  
ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

## ԴԱՍ 4





# ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

«Չեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության  
ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ  
Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի  
և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և  
իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության  
կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ  
գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների  
տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները,  
որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության  
տեսակետների հետ:





# ՂԱՍ 4

ԱՆՉԱՓԱՅԱՍՆԵՐԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ




## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.  
մոտիվացնող ներածական տեսանյութ,  
դասի տեսական նյութ,  
բառարան և  
ինքնաստուգիչ հարցեր:  
Բոլոր բաղադրիչների յուրացման համար  
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով  
ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն  
այս ձեռնարկում:

# ՄՈՏԻՎԱԶՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ



Տեսանյութն ուշադրությամբ  
ուսումնասիրելու համար անհրաժեշտ է  
մոտ 5 րոպե:

Ուշադրությամբ կարդացեք  
դասի տեսական մասը՝  
օգտվելով բառարանից,  
և այն յուրացնելուց հետո  
միայն պատասխանեք  
ինքնաստուգիչ հարցերին:  
Այս աշխատանքների  
համար անհրաժեշտ է մոտ  
200 րոպե:

Նախքան հաջորդ  
պարբերությունը  
կարդալը՝ խորհեք,  
թե որն է քրեական  
պատասխանատվության  
տարիքի սահմանման  
նպատակը: Ըստ  
Ձեզ՝ քրեական  
պատասխանատվության  
տարիքի սահմանումը  
ենթադրում է  
անձին քրեական  
պատասխանատվության  
ենթարկելու  
անխուսափելիություն:

# Ե

րեխայի իրավունքների մասին կոնվենցիայի  
40-րդ հոդվածը սահմանում է այն անկյունաքարային  
պահանջները, որոնք, սահմանում են անչափահաս-  
ների քրեական պատասխանատվության առանձնա-  
հատկությունները: Այդ հոդվածի 1-ին մասը սահմա-  
նում է, որ. «Մասնակից պետությունները ճանաչում են  
մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախ-  
տած համարվող յուրաքանչյուր երեխայի իրավունքը՝  
արժանանալու այնպիսի վերաբերմունքի, որը նպաս-  
տում է նրա արժանապատվության և նշանակալիությ-  
ան զգացումի զարգացմանը, երեխայի մեջ ամրապն-  
դում է հարգանքը մարդու իրավունքների և ուրիշնե-  
րի հիմնարար ազատությունների նկատմամբ, և որի  
դեպքում հաշվի է առնվում երեխայի տարիքը և հա-  
սարակության մեջ նրա վերաինտեգրացման և հետագա  
դրական դեր խաղալուն նպաստելու ցանկալիությ-  
ունը» (1):

Քրեական քաղաքականության իրականաց-  
ման առաջնահերթ խնդիրներից մեկն այս առումով,  
այն տարիքի սահմանումն է, որի շեմը հատելուց հետո

քրեական օրենքով արգելված արարք կատարած երեխան կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: ՀՀ գործող քրեական օրենսգրքի (2) 24-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը: Այն անձինք, որոնց տասնչորս տարին լրացել է մինչև հանցանքը կատարելը, ենթակա են քրեական պատասխանատվության սպանության, դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, մարդուն առևանգելու, բռնաբարության, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, ավազակության, գողության, կողոպուտի, շորթման, առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու, ծանրացուցիչ հանգամանքներում գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու, թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր հափշտակելու կամ շորթելու, տրանսպորտային միջոցները կամ հաղորդակցության ուղիները փչացնելու, խուլիգանության համար: Ընդ որում, նույնիսկ եթե անձը հասել է քրեական պատասխանատվության նախատեսված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցել իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարել դա, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքային այս տարբերակումները՝ 16 և 14, պահպանվել են նաև ՀՀ նոր քրեական օրենսգրքում (3), սակայն նեղացվել է այն արարքների շրջանակը, որոնց համար 14-16 տարիքային խմբի ներկայացուցիչը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Նոր օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած կանոնակարգումների համաձայն՝ այն անձը, որի 14 տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին, ենթակա է քրեական պատասխանատվության սպանության, առողջությանը դիտավորությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, մարդուն առևանգելու, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, ավազակության, ծանրացուցիչ հանգամանքներում կողոպուտի, ծանրացուցիչ հանգամանքներում գողության, շորթման, ծանրացուցիչ հանգամանքներում գույքը ոչնչացնելու կամ վնասելու, խուլիգանության, հրագեն, դրա հիմնական բաղկացուցիչ մասեր, ռազ-

մամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթեցման սարքեր հափշտակելու, հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մասեր, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթեցման սարքեր շորթելու, թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) կամ պրեկուրսորներ հափշտակելու, թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) կամ պրեկուրսորներ շորթելու համար:

Թեև օրենսդրի կողմից նախատեսվում է 14 տարին լրացած երեխային քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորություն, սակայն, միաժամանակ, սահմանվում են անչափահասներին քրեական պատասխանատվության ենթարկելու առանձնահատկություններ, այդ թվում՝ քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն դրսևորումներ: Կարևոր է գիտակցել, որ քրեական պատասխանատվության տարիքի սահմանումը երեխային ոչ միայն հնարավոր պատժի ենթարկելու, այլ նրա նկատմամբ՝ քրեական օրենսդրության շրջանակներում նախատեսված վերականգնողական միջոցների կիրառման շեմն է (4):



Ուշադրություն դարձրեք կոնվենցիոն կարգավորումներին՝ անչափահասների արտադատական միջամտության առնչությամբ:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 40-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետը սահմանում է, որ հանցանքի կատարման մեջ կասկածվող, մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախտած համարվող երեխաների նկատմամբ պետք է, երբ դա տեղին է և իմաստավորված, նախատեսել խնդրի լուծման արտադատական միջամտության տարբերակներ, պայմանով, որ լիովին երաշխավորվում են նրանց իրավունքները և ապահովվում իրավական պաշտպանության երաշխիքները: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ անհրաժեշտ է այնպիսի բազմազան միջոցառումների առկայությունը, ինչպիսիք են խնամքի, խնամակալության և հսկողության մասին հրամանները, խորհրդատվական ծառայությունները, փորձաշրջանի նշանակումը, դաստիարակությունը,

կրթական և մասնագիտական պատրաստության ծրագրերը և առանձին հաստատություններում խնամքի այլընտրանքային այլ ձևեր, որոնք ապահովում են երեխայի նկատմամբ նրա բարեկեցությանը, ինչպես նաև դրությանն ու հանցագործության բնույթին համապատասխանող վերաբերմունք:

Անչափահասների նկատմամբ քրեաիրավական ներգործությունը ևս ենթադրում է, որ դրա հիմնական նպատակը պետք է լինի երեխաների դաստիարակությունը և վերասոցիալականացումը, այլ ոչ թե գրկանքներ կիրառելը:

Պեկինյան կանոնների 18-րդ կանոնում նշվում է. «Առավել ճկունություն ապահովելու և ուղղիչ հիմնարկներում կալանավորումից հնարավորին չափ խուսափելու նպատակով, իշխանության իրավասու մարմինը, գործի որոշման ժամանակ, իր տրամադրության տակ պետք է ներգործության համալիր միջոցառումներ ունենա:

Այդպիսի միջոցառումները, որոնք կարող են իրականացվել իրար հետ զուգակցելով, հանդիսանում են.

ա) խնամակալության մասին որոշումը, դեկավարումը և հսկողությունը,

բ) պրոբացիան,

գ) ի բարօրություն համայնքի աշխատանք կատարելու մասին որոշումը,

դ) դրամական պատիժը, փոխհատուցումը և իրավունքների ռեստիտուցիան

ե) միջանկյալ և այլ կարգի միջոցառումների մասին որոշումը,

զ) խմբակային թերապիայի և նմանատիպ այլ միջոցառումների մասին որոշումը,

է) դաստիարակության հանձնելու, ապրելավայրի կամ դաստիարակչական միջոցների վերաբերյալ որոշումը,

ը) համապատասխան այլ որոշումները»:

Ծանոթացեք միջազգայնորեն ընդունված՝ պատժի այլընտրանքային միջոցառումներին:

Նմանատիպ միջոցներ ՀՀ քրեական օրենսգրքով ևս նախատեսված են: Մասնավորապես, ՀՀ թե՛ նոր, թե՛ գործող քրեական օրենսգրքերով նախատեսված են, օրինակ, պատիժը պայմանականորեն չկիրառելը, հանրային աշխատանքները, տուգանքը, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտնի, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանն անչափահասի նկատմամբ կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի հետևյալ միջոցները.

- 1 նախազգուշացում,
- 2 ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելն առավելագույնը վեց ամիս ժամկետով,
- 3 պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը՝ դատարանի սահմանած ժամկետում,
- 4 ժամանցի ազատության սահմանափակումը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումն առավելագույնը վեց ամիս ժամկետով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ դատարանն անչափահասի նկատմամբ կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի այլ միջոցներ: Վերջին դրույթի կիրառությունը, սակայն, խնդրահարույց է, քանի որ Միավորված ազգերի կազմակերպության՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների նվազագույն ստանդարտ կանոնների (Տոկիոյի կանոններ), կետ 3.1-ը սահմանում է, որ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների սահմանումը և կիրառումը պետք է կանոնակարգված լինի օրենքով (5):

Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ անչափահասի ուղղվելու հնարավորության մասին դատարանի եզրահանգումը պետք է հիմնված լինի ոչ միայն հանրորեն վտանգավոր արարքը բնութագրող օբյեկտիվ և սուբյեկտիվ տվյալների վրա, այլև այնպիսի փաստերի, ինչպիսիք են՝ անչափահասի վարքագիծը, պատճառված վնասի հատուցումը, հանցագործության բացահայտմանն ակտիվորեն նպաստելը, հանցանքը մեծահասակների ազդեցության տակ կատարելը և այլն:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անչափահասը դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե՝

- 1 առաջին անգամ է հանցանք կատարել,
- 2 կատարել է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք:

Այնուհանդերձ, օրենսդրի կողմից դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորությունը միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով սահմանափակելը, արդարացված չէ: Դաստիարակչական բնույթի միջոցներ նշանակելու չափանիշը պետք է լինի ոչ թե կատարված հանցանքի ծանրությունը, այլ դաստիարակության պահանջը և դրա նկատմամբ ընկալունակությունը: Ճիշտ կլիներ, որ այս միջոցները հնարավոր լիներ կիրառել նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարած անչափահասների, օրինակ՝ բնակարանային գողություն կատարած կամ դրան օժանդակած երեխայի նկատմամբ: Ցավոք, 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգիրքն այս հարցի կարգավորման առումով հետևել է ՀՀ գործող քրեական օրենսգրքի տրամաբանությանը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ անչափահասին քրեական պատասխանատվությունից ազատելը և դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելը հնարավոր է միայն դատարանի որոշմամբ և դրա հիման վրա: Ընդ որում, անչափահասի նկատմամբ կարող են միաժամանակ մի քանի դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառվել: Մասնավորապես, հնարավոր է զուգակցել դաստիարակչական

բնույթի հարկադրանքի այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ նախազգուշացումը և ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելը կամ պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը և ժամանցի ազատության սահմանափակումն ու վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը:

Գատարանն իրավասու է ընտրելու վերոհիշյալ միջոցներից յուրաքանչյուրը, որն առավելապես կարող է նպաստել անչափահասի ուղղվելուն և նրա կողմից նոր հանցանքների կատարումը կանխելուն:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 92-րդ հոդվածում բացահայտվում է դատախարակչական բնույթի հարկադրանքի միջոցների բովանդակությունը: Համաձայն այդ կանոնակարգումների՝ նախազգուշացումն իր արարքով պատճառված վնասի և քրեական օրենսգրքով նախատեսված հանցանքների կրկնակի կատարման հետևանքների պարզաբանումն է անչափահասին: Մասնավորապես անչափահասը նախազգուշացվում է, որ հանրորեն վտանգավոր նոր արարք կատարելու դեպքում նա կենթարկվի քրեական պատասխանատվության և կդատապարտվի:

Հսկողության հանձնելը՝ ծնողների կամ նրանց փոխարինող անձանց, կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի վրա անչափահասի նկատմամբ դատախարակչական ներգործության և նրա վարքագծի նկատմամբ վերահսկողության պարտականություն դնելն է: Ծնողների և նրանց փոխարինող անձանց վրա նման պարտականություն կարող է դրվել նաև ամուսնաընտանեկան իրավունքի նորմերի ուժով: Սակայն ՀՀ գործող քրեական օրենսգրքում տեղ գտած ձևակերպման համաձայն՝ հսկողության հանձնելը հարկադրանք չի ենթադրում, քանի որ հանցանք կատարած անչափահասի վրա որևէ պարտականություն չի դրվում: Մասնավորապես, այն դրսևորվում է ծնողների կամ նրանց փոխարինող անձանց, կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի, կամ տեղական ինքնակառավարման մարմնի վրա անչափահասի նկատմամբ դատախարակչական ներգործության և նրա վարքագծի նկատմամբ

վերահսկողության պարտականություն դնելու մեջ: Ընդ որում, օրենքը հստակ չի կանոնակարգում այն անձանց ու մարմինների պարտականությունները և պատասխանատվությունը, ում հսկողությանը հանձնվում է անչափահասը: Օրենսդրական ոչ հստակ կանոնակարգվածության պատճառով այս դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցն արդյունավետորեն չի կիրառվում:

Պատճառված վնասը հարթելու պարտականությունը դրվում է՝ հաշվի առնելով անչափահասի գույքային դրությունը և նրա մոտ համապատասխան աշխատանքային ունակությունների առկայությունը: Անչափահասի գույքային դրությունը որոշվում է նրա ինքնուրույն վաստակի առկայությամբ, այն է՝ հիմնական կամ ժամանակավոր աշխատանքի համար ստացվող վարձատրությունը կամ ձեռնարկատիրական գործունեությունից առաջացած եկամուտը, ինչպես նաև այլ եկամուտը, օրինակ, կրթաթոշակը: Ընդ որում, անչափահասն իր աշխատանքով ևս կարող է վերացնել պատճառված նյութական վնասը: Վերջինս նույնպես սահմանվում է դատարանի կողմից, որը ֆիքսում է հանցավորի՝ պատճառված վնասն անմիջականորեն վերացնելու ունակությունը: Հնարավոր է, որ պատճառված վնասը հարթելու պարտականությունը կապված լինի նաև բարոյական վնաս հասցնելու հետ, ինչը կարող է հարթվել, օրինակ՝ ներողություն խնդրելով:

Ժամանցի ազատության սահմանափակումը և անչափահասի վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը կարող են նախատեսել որոշակի վայրեր այցելելու, ժամանցի որոշակի ձևերի, այդ թվում՝ մեխանիկական տրանսպորտային միջոցներ վարելու հետ կապված արգելք, օրվա որոշակի ժամերից հետո տանից դուրս գտնվելու, առանց տեղական ինքնակառավարման մարմնի համաձայնության այլ վայրեր ուղևորվելու իրավունքի սահմանափակում: Բացի դրանից, անչափահասին կարող է նաև ուսումնական հաստատություն վերադառնալու կամ տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ աշխատանքի տեղավորվելու պահանջ ներկայացվել:

Անչափահասի կողմից դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցից պարբերաբար խուսափելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրա-

վասու մարմնի միջնորդությամբ նյութերն ուղարկվում են դատարան՝ միջոցը վերացնելու և անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Իսկ նոր հանցանք կատարելիս անչափահասը նախկին հանցագործության համար, որի կապակցությամբ նրա նկատմամբ կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց, քրեական պատասխանատվության ենթակա չէ:

2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքով ևս նախատեսվել են անչափահասների նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հնարավորություններ: Մասնավորապես, նոր օրենսգրքի 104-րդ հոդվածը սահմանում է, որ եթե անչափահասն առաջին անգամ է մեղադրվում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելու մեջ, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը հիմնավորում է, որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով: Անչափահասի նկատմամբ դատարանը կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի հետևյալ միջոցները. տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելը՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, պատճառած վնասը հարթելու պարտականություն դնելը՝ առավելագույնը 6 ամիս ժամկետում, ժամանցի ազատությունը սահմանափակելը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջներ սահմանելը՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, ուսման անցնելը, ուսումը շարունակելը, հատուկ կրթական, մարզական, մշակութային կամ հանրային ծրագրին կամ միջոցառմանը կամ վերականգնողական հաստատությունում վերականգնողական ծրագրին մասնակցելը:

Օրենսդիրը սահմանում է, որ 21 տարին չլրացած անձի նկատմամբ կարող է միաժամանակ նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի մի քանի միջոց: Դաստիարակչական բնույթի հարկադրանքի նշանակված միջոցից խուսափելու կամ դրա պայմանները խախտելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ դատարանը կարող է վերացնել նշա-

նակված միջոցը և անչափահասին ենթարկել անվտանգության միջոցի, օրինակ՝ որոշակի վայրեր այցելելու արգելքի:

Ընդ որում, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառմամբ քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նոր հանցագործության համար ազատվել քրեական պատասխանատվությունից՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով:

Օրենսդիրը սահմանում է նաև դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների բովանդակությունը, այն է՝ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելը նշված մարմինների պահանջները կատարելու պարտականություն դնելն է:

Պատճառած վնասը հարթելու պարտականությունը դրվում է՝ հաշվի առնելով անչափահասի և նրա ընտանիքի գույքային դրությունը, ինչպես նաև նրա համապատասխան հմտությունները կամ աշխատանքային ունակությունները:

Ժամանցի ազատության սահմանափակումը և անչափահասի վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը կարող է նախատեսել որոշակի վայրեր այցելելու, ժամանցի որոշակի ձևերի, այդ թվում՝ որոշակի անձանց հետ շփվելու, տրանսպորտային միջոցներ վարելու հետ կապված արգելք կամ օրվա որոշակի ժամերին տնից դուրս գտնվելու, առանց տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության այլ վայրեր ուղևորվելու իրավունքի սահմանափակում:

Ուսման անցնելը, ուսումը շարունակելը, 18-ից մինչև 21 տարեկանում հանցանք կատարած անձի՝ տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ

Ծանոթացեք օրենսդրական հատուկ կարգավորմանը:

աշխատանքի անցնելն ուսման անցնելու, ուսումը շարունակելու կամ աշխատանքի տեղավորվելու՝ դատարանի սահմանած պարտականությունն է:

Հատուկ կրթական, մարզական, մշակութային կամ հանրային ծրագրերին կամ միջոցառումներին ներգրավվելը հատուկ կրթական, մարզական, մշակութային կամ հանրային ծրագրին կամ միջոցառմանը ներգրավվելու պարտականությունն է, իսկ վերականգնողական հաստատությունում վերականգնողական ծրագրին մասնակցելը նշված հաստատությունում իրականացվող վերականգնողական ծրագրին մասնակցելու պարտականությունն է:

ՀՀ նոր քրեական օրենսգրքում տեղ գտած դատախարակչական բնույթի հարկադրանքի միջոցների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առավելապես շեշտը դնում է երեխայի կրթության, դատախարակության, վերականգնողական ծրագրերին ներգրավվելու վրա: Այնուհանդերձ, դեռևս խնդրահարույց է դատախարակչական բնույթի հարկադրանքի միջոցի ի կատար ածումը անչափահասին վերականգնողական հաստատությունում վերականգնողական ծրագրին ներգրավվելու միջոցով, քանի որ հստակ չէ, թե որ վերականգնողական հաստատություններն են առկա այդ նպատակների համար:

Անչափահասների քրեական պատասխանատվության առանձնահատկություններին անդրադառնալիս՝ անհրաժեշտ է քննարկել նաև նրանց՝ մեղիացիոն գործընթացին ներգրավվելու հնարավորությունը: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը սահմանում է անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը՝ տուժողի հետ հաշտվելու դեպքում, այնուհանդերձ, օրենսդիրը հստակ չի կանոնակարգում այս ինստիտուտի կիրառման հնարավորությունն անչափահաս հանցավորի կամ անչափահաս տուժողի պարագայում, մասնավորապես պարզ չէ, թե արդյոք անչափահասը կարող է հանդես գալ որպես հաշտության կողմ, թե այդ դերը վերապահված է նրա օրինական ներկայացուցչին:

Այս առումով առավել առաջադիմական է 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքի կանոնակարգումը, որի 82-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը սահմանում են՝

«...3. Եթե անչափահաս կամ սահմանափակ մեղսունակ անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա նա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և առկա է հաշտության վերաբերյալ տուժողի և հանցագործության համար մեղադրվող անձի շահերի պաշտպանության պարտականություն ունեցող անձի՝ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը:

4. Եթե հանցագործությունից տուժողը 14 տարին չըրացած անձ է կամ հոգեկան առողջության խնդիրների կամ մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով լրիվ կամ մասնակիորեն զրկված է իր դեմ ուղղված հանցագործության բնույթն ու հետևանքները գիտակցելու կամ իր վարքագիծը ղեկավարելու հնարավորությունից, ապա նրա դեմ ուղղված հանցանք կատարած անձը չի կարող հաշտության հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից»:

Այնուհանդերձ, նույնիսկ այս կանոնակարգման պարագայում հստակեցումների կարիք կա, հասկանալու համար, թե ինչպես պետք է վարվել, եթե օրինակ, երեխայի շահերը ներկայացնող վստահորդի և երեխայի շահերի պաշտպանության պարտականություն ունեցող այլ անձի կարծիքները տարբերվում են:

Հարցի օրենսդրական հստակ կանոնակարգման բացակայության պայմաններում՝ այս հարցի լուծումը դեռևս մնալու է դատական պրակտիկայի կարգավորման տիրույթում:

Ծանոթացեք օրենսդրական Նորամուծությանը՝ անչափահասին մեղիացիոն գործընթացին Ներգրավելու հնարավորությունների մասին:

Ըստ Ձեզ՝ ինչ լուծում է հնարավոր դատական պրակտիկայում:

Անչափահասների նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելու որոշում կայացնելիս, ինչպես նաև ընդհանրապես անչափահասին քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկելիս՝ կար-

ՀՀ Արդարադատության  
Նախարարության  
պրոբացիայի  
ծառայության  
գործունեության և  
անչափահասների  
համար նախատեսված  
ծրագրերի մասին  
մանրամասն  
տեղեկություններ կարող  
եք ստանալ ծառայության  
կայքից՝  
<https://probation.am/> :

և որ դերակատարություն պետք է վերապահվի պրոբացիայի ծառայության աշխատակիցներին և սոցիալական աշխատողներին, ովքեր ոչ միայն առավել սպառիչ տեղեկություններ կարող են տրամադրել դատարանին երեխայի կարիքների և պահանջմունքների, ընտանեկան դրության, կրթական ոլորտում ունեցած խնդիրների, այլև երեխայի վերասոցիալականացման ուղղությամբ ճիշտ տակտիկական քայլերի մասին, քանի որ հենց իրենք են հետագայում անմիջական մասնակցություն ունենալու նշանակված պատժի կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցի ի կատար ածմանը: Ներկայումս պրոբացիայի աշխատակիցներն առավելապես մասնակցություն են ունենում ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացներին, սակայն անչափահասների գործերով իրենց մասնակցությունն առավել արդյունավետ կարող է լինել հենց պատիժ նշանակելու փուլում:

Անչափահասներին քրեական պատասխանատվությունից ազատելու մյուս առանձնահատկությունը վերաբերում է նրանց քրեական պատասխանատվությունից ազատելուն՝ քրեա-

կան պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածը սահմանում է չափահասների քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետները, իսկ 95-րդ հոդվածը նախատեսում է, որ անչափահասների պարագայում այդ ժամկետները կրճատվում են կիսով չափ: Հետևաբար, անչափահասն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները՝

- 1 1 տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից,
- 2 2.5 տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից,
- 3 5 տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից,
- 4 7.5 տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից:

Մնացած առումներով՝ վաղեմության ժամկետների կիրառման առանձնահատկություններ անչափահասների պարագայում նախատեսված չեն: Մասնավորապես, ինչպես և չափահասների պարագայում, անչափահասների դեպքում ևս վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից:

Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից կամ դատից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից: Ընդ որում, անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է տասը տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից՝ քսան տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ:

Վաղեմության ժամկետն անցնելու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու առանձնահատուկ կանոններ առկա են նաև 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում:

Ծանոթացեք  
օրենսդրական  
փոփոխությանը:

Նոր օրենսդրական կանոնակարգմամբ առանցքային փոփոխություն է տեղի ունեցել վաղեմության ժամկետի հաշվարկման առումով. եթե գործող քրեական օրենսգիրքը վաղեմության ժամկետը հաշվում է մինչև մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը, ապա նոր քրեական օրենսգիրքը՝ մինչև անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելը: Հստակեցվել է նաև հանցակիցների պարագայում վաղեմության ժամկետի հաշվարկման հիմքը. հանցակցությամբ հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ոչ թե իր կատարած արարքի, այլ կատարողի կողմից հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից են անցել օրենսգրքով սահմանված վաղեմության ժամկետները:

Միաժամանակ, նոր կանոնակարգումների համաձայն նախատեսվել են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ավելի երկար ժամկետներ, որոնք, ինչպես և գործող օրենսդրության պարագայում, անչափահասների դեպքում կրճատվում են կիսով չափ: Արդյունքում,

Ծանոթացեք  
անչափահասին  
քրեական  
պատասխանատվության  
ենթարկելու  
վաղեմության  
ժամկետների մասին  
օրենսդրական նոր  
կանոնակարգումներին:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի համաձայն, անչափահասին հնարավոր կլինի քրեական պատասխանատվությունից ազատել, եթե անցել են վաղեմության հետևյալ ժամկետները՝

- 1 2.5 տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքի դեպքում.
- 2 5 տարի՝ միջին ծանրության հանցանքի դեպքում.
- 3 7.5 տարի՝ ծանր հանցանքի դեպքում.
- 4 10 տարի՝ առանձնապես ծանր հանցանքի դեպքում:

Օրենսդրական նոր կանոնակարգմամբ՝ վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե

մինչև վաղեմության ժամկետներն անցնելն անձը կատարում է նոր հանցանք: Այդ դեպքում յուրաքանչյուր հանցագործության համար վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքն ավարտվելու պահից: Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից: Ընդ որում, անչափահասը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքն ավարտվելու օրվանից անցել է 7.5 տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտվելու օրվանից՝ 12.5 տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ:

Անչափահասների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները քննարկելիս կարևոր նշանակություն ունի նաև դատվածության ժամկետների հաշվարկման առանձնահատկություններին անդրադառնալը: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածը սահմանում է դատվածության հաշվարկման հիմքերը, սահմանելով, որ անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը: Նույն օրենսգրքի 95-րդ հոդվածը սահմանում է անչափահասների դատվածության հաշվարկման առանձնահատկությունները: Այս դրույթների համադրումից հետևում է, որ անչափահասների պարագայում դատվածություն չունեցող են համարվում այն անձինք, ովքեր դատարանի դատավճռով դատապարտվել են առանց պատիժ նշանակելու կամ դատարանի դատավճռով ազատվել են պատիժը կրելուց կամ պատիժը կրել են այնպիսի արարքի համար, որի հանցավորությունն ու պատժելիությունը վերացված են օրենքով:

Անչափահասների դատվածությունը մարվում է՝

- 1 պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում՝ փորձաշրջանն անցնելուց հետո,
- 2 ազատագրվումից ավելի մեղմ պատժի դատապարտված անձանց նկատմամբ՝ նշանակված պատիժը կրելուց հետո,

**Ծանոթացեք օրենսդրական նորամուծությանը:**

- 3 միջին ծանրության հանցագործության համար ազատագրկման դատապարտված անձանց նկատմամբ՝ պատիժը կրելուց 1 տարի անցնելուց հետո,
- 4 ծանր հանցագործության համար ազատագրկման դատապարտված անձանց նկատմամբ՝ պատիժը կրելուց 3 տարի անցնելուց հետո,
- 5 առանձնապես ծանր հանցագործության համար ազատագրկման դատապարտված անձանց նկատմամբ՝ պատիժը կրելուց 5 տարի անցնելուց հետո:

ՀՀ գործող քրեական օրենսգիրքը չի կանոնակարգում վաղեմության ժամկետի մարման ժամկետն այն դեպքերի համար, երբ անչափահասի կողմից կատարվել է ոչ մեծ ծանրության հանցանք և նա դրա համար դատապարտվել է ազատագրկման, ինչն էլ խնդրահարույց կարող է լինել իրավակիրառ պրակտիկայում:

Ինչպես և չափահասների պարագայում, անչափահասի նկատմամբ ևս կիրառելի են դատվածության հանելու և մարվելու ինստիտուտները: Մասնավորապես, եթե անչափահասը պատիժը կրելուց հետո դրսևորել է անբասիր վարքագիծ, ապա նրա խնդրանքով դատարանը կարող է դատվածությունը հանել մինչև դատվածությունը մարելու ժամկետը լրանալը, բայց ոչ շուտ, քան այդ ժամկետի կեսը լրանալը:

Եթե անձը մինչև դատվածությունը մարվելը նոր հանցանք է կատարում, ապա դատվածության մարման ժամկետն ընդհատվում է: Առաջին հանցագործության համար դատվածությունը մարվելու ժամկետը հաշվարկվում է վերստին՝ վերջին հանցագործության համար պատիժը (հիմնական և լրացուցիչ) փաստորեն կրելուց հետո: Այդ դեպքում անձը երկու հանցագործությունների համար էլ դատված է համարվում մինչև դրանցից առավել ծանր հանցագործության համար դատվածությունը մարվելու ժամկետը լրանալը:

**Ծանոթացեք անչափահասի դատվածության մարման օրենսդրական նոր կանոնակարգումներին:**

2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքի 107-րդ հոդվածը, կանոնակարգելով անչափահասների դատվածության առանձնահատկությունները, նախատեսում է, որ դատվածության մարման ժամկետը հավասար է՝

- 1 6 ամսվա՝ առավելագույնը 3 տարի ժամկետով ազատագրկման ձևով պատիժը կրելուց հետո,
- 2 1 տարվա՝ առավելագույնը 5 տարի ժամկետով ազատագրկման ձևով պատիժը կրելուց հետո,
- 3 3 տարվա՝ առավելագույնը 10 տարի ժամկետով ազատագրկման ձևով պատիժը կրելուց հետո,
- 4 5 տարվա՝ 10 տարուց ավելի ժամկետով ազատագրկման ձևով պատիժը կրելուց հետո:

Հարկ է նշել, որ անչափահասների դատվածությունը հաշվի չի առնվում նեցիդիվ գնահատելիս:

# ՀՂՈՒՄՆԵՐ



Հղումները նախատեսված են Ձեզ հետաքրքրող կյուբերի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար:

- 1 Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (ընդունված 20.11.1989, ՀՀ-ն վավերացրել է 22.06.1993),  
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=60503>  
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 2 ՀՀ գործող քրեական օրենսգիրք (ընդունված 18.04.2003, ուժի մեջ է մտել 01.08.2003),  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154707>  
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 3 ՀՀ նոր քրեական օրենսգիրք (ընդունված 05.05.2021, ուժի մեջ է մտնելու 01.07.2022),  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153080>  
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 4 Шедрин Н.В. Минимальный возраст уголовной ответственности или минимальный возраст применения уголовных санкций? Судья. 2017. № 8 (80), էջեր 20-24,  
<http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=CJI&n=108401#DhrxTsSKJ7jmCTKH1>  
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 5 Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ), ընդունված՝ 1990թ.-ի դեկտեմբերի 14-ին, որոշում 45/110,  
<https://rm.coe.int/16806f405a>  
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

## ԲԱՌԱՐԱՆ



Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 15 րոպե:

**ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ** — Ազատագրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակներ են (օրինակ՝ տուգանք, հանրային աշխատանքներ) կամ քրեախրավական ներգործության այլ միջոցներ (օրինակ՝ դատախարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ) կամ արձագանքման այլ միջոցներ (օրինակ՝ մեդիացիա կիրառելը, պատիժը պայմանականորեն չկիրառելը և փորձաշրջան սահմանելը):

**ԵՐԵԽԱՅԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ** — Երեխայի ֆիզիկական, բարոյական և հոգեկան վիճակի բնութագիր է, որը ենթադրում է, որ երեխան ունակ է առօրյա ֆիզիկական ակտիվության, ուսման, ինչպես նաև գտնվում է կայուն դրական-հուզական վիճակում, ինչն էլ հնարավոր է նրա տարիքով պայմանավորված կարիքների բավարարման պարագայում:

**ԽՄԲԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱ** — Հոգեբանական աջակցության ծրագիր է, որի պայմաններից մեկն այն է, որ նման աջակցությունը տրամադրվում է ոչ թե մեկ անձի առանձնացված ձևով, այլ 6-ից 12 հոգուց բաղկացած խմբի շրջանակներում: Սրա առավելությունն այն է, որ ընդհանուր խնդիրներ ունեցող խմբի անդամները կարողանում են նման աջակցություն ստանալ ոչ միայն հոգեբանից, այլև միմյանցից:

**ՊՐՈԲԱՅԻԱ** — Սոցիալ-հոգեբանական ծառայությունների համակարգ է՝ ուղղված հանցանք կատարած անձի վերաինտեգրմանը, վերասոցիալականացմանը, նրա կողմից նոր հանցանքների կանխմանը, ինչպես նաև հանրային անվտանգության ապահովմանը: Այն իրականացվում է հանցանք կատարած անձի նկատմամբ այ-

լընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների կիրառման, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի կրումից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու ընթացքում հսկողություն, ուղղորդում և աջակցություն իրականացնելու միջոցով:

**ՌԵՍՏԻՏՈՒՑԻԱ** — Մինչ միջամտությունը եղած գույքային, իրավական վիճակի վերականգնումն է:

**ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ** — Միջոցառումների համալիր է՝ ուղղված անձի խախտված կամ կորցրած հասարակական կապերի և հարաբերությունների վերականգնմանը, ինչը թույլ կտա նրան առանց կոնֆլիկտների ապրել սոցիալական միջավայրում և հարաբերվել այլ անձանց հետ, զերծ մնալ հանցավոր վարքագծի դրսևորումից:

**ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ** — Պետական կամ հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրեր են (օրինակ՝ կրթական ծրագրեր, հոգեբանական աջակցության ծրագրեր)՝ ուղղված իրավախախտում կատարած անձի վերասոցիալականացմանը, վերաինտեգրմանը, դրական ներանձնային փոփոխությունների խթանմանը, ինչն էլ կնվազեցնի հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

**ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ** — Իրավական, կազմակերպական և սոցիալ-հոգեբանական միջոցառումների իրականացման գործընթաց է՝ ուղղված իրավախախտում կատարած անձի արժեքային կողմնորոշումների, վարքագծի նորմերի, մոդելների՝ հասարակության կողմից ընդունելի տարբերակների վերափոխմանը: